ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
<<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТИ МАРЗ /ОБЛАСТЬ/
ЗАО<< АРТАШАТИ
БЖШКАКАН
КЕНТРОН>>

0701 ք.Արտաշատ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ 116
Հեռ. 0235 2-55-37

0701 г.АРТАШАТ ул.А.ХАЧАТУРЯНА 116

էլ.փոստ artashatbk-hivandanoc@mail.ru

07.04.2020թ.
հշ. ա/68

<< ԱԻԴԱ ԹՐԵՅԴ>> ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Է.Փոթոյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի Է.Փոթոյան .

Համաձայն 10.01.2020թ. թիվ ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/7-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ <<Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով , ծավալներով , ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը ,իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար >>:
Պայմանագիրը կնքվել է << Գնումների մասին >> օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո , պայմանագրի կողմերի միջև 10.02.2020 թվականին կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:
Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե՝ ... բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի :
Ինչպես հայտնի է, Գնորդ ընկերության կողմից Ձեզ դեռևս փետրվար ամսից բազմիցս ապրանքների մատակարարման պատվեր է արվել , որը սակայն մնացել է անպատասխան :
Հետևաբար , Ձեր կողմից խախտվել են ապրանքների մատակարարման համար պայմանագրով սահմանված բոլոր ժամկետները :
Պայմանագրի 6.2 –րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա , սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
03.04.2020 թվականին Մեր կողմից Ձեզ ծանուցվել է , որ պայամնագիրը միակողմանի լուծվում է ապրանքը չմատակարարելու պատճառով:
Ինչ վերաբերվում է Ձեր կողմից Պայմանագրի՝ << անհաղթահարելի ուժի ազդեցությունը>> ֆորսմաժորային իրավիճակներին հղում կատարելու հանգամանքին ,ապա դա որևէ հիմնավորում չունի հետևյալ պատճառաբանությամբ՝

մեր ընկերության կողմից առաջին պատվերներն արվել են դեռևս փետրվար ամսից սկսած , սակայն մեր պատվերներն առանց որևէ հիմնավորման չկատարվեցին: Հետևաբար , ելնելով վերոգրյալից հայտնում ենք Ձեզ որ գնորդ ընկերությունը հրաժարվում է շարունակել Ձեզ հետ համագործակցությունը Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն և խնդրում ենք Պայմանագիրը համարել լուծված սույն ծանուցումը ստանալու օրվանից և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով << Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526 –Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ. Համբարձումյան

Կատարող՝ գնումների համակարգող

Հ.Մկրտչյան հեռ. 093 53 97 10